

ՍՏ. ՆԱԶԱՐՅԱՆՑԻ ԱՌԱՋԻՆ ԳԻՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ XIX դԱՐԻ ԳՐԱԿԱՆ
ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ՀԱՐՑԵՐԸ

Ստ.Նազարյանցի գրական և գիտական գործունեության մեջ հայ ազգային լեզվի հարցը գրավում է առանձնահատուկ տեղ և մնում կարևորագույն խնդիր: Կապված լինելով նրա ընդհանուր գործունեության հետ՝ այդ հարցը սկզբնավորվում և զարգանում է այդ գործընթացին համապատասխան և զուգընթաց:

1842թ. Նազարյանցը ժամանում է Կազան, որտեղ ստանձնում է տեղի համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի պարտականությունները: Նույն՝ 1842թ., Նազարյանցը ներկայացնում է մի ծրագիր, որտեղ հիմնավորում է հայոց լեզվի դերն ու նշանակությունը ինչպես ընդհանուր լեզվաբանության, այնպես էլ սեփական ժողովրդի հոգևոր զարգացման համար: Այդ շրջանում Կազանի համալսարանի նվաճումներից մեկը պետք է համարել հայոց լեզվի՝ իբրև ինքնուրույն առարկայի ուսումնասիրության ուղղությամբ առաջին ձեռնարկումները: Նազարյանցը երկար տարիներ իրեն նվիրում է լեզվի և գրականության շուրջը մղվող պայքարին և բուռն վեճերին՝ գիտակցելով երևույթի քաղաքական, պատմական և հոգևոր բացառիկ կարևորությունը: Նա մշակում է ուշագրավ սկզբունքներ, փորձում որոշել լեզվի և գրականության դերը կյանքում:

1843թ. վերջերին Նազարյանցը համալսարանի «Գիտություն սիրողների ընկերության» նիստերից մեկում կարդում է հայ հին գրականության մասին մի համառոտ զեկուցում՝ «Թռուցիկ ակնարկ հայ գրականության պատմության սկզբնավորումից մինչև 13-րդ դարը» (Веглый взгляд на историю Гайканской литературы, до конца 13 столетия) վերնագրով, որը 1844թ. տպագրվեց առանձին գրքով: Սա փաստորեն ռուսերեն լեզվով գրված առաջին աշխատությունն է հայ գրականության մասին: Լեոն իր մենագրության մեջ նշում է, որ Նազարյանցն իր զեկուցման համար օգտվել է Վենետիկում 1829թ. իտալերեն լեզվով լույս տեսած՝ Յ.Սուրբիաս Սոմայանի «Շրջան Հայաստանի գրականության պատմության» վերնագրով հայ գրականության համառոտ պատմությունից:¹

1. Լեո, Երկերի ժողովածու, հ.6, 1987թ., էջ 45:

Ծանոթանալով աշխատությանը՝ նկատում ենք, որ Նազարյանը նպատակ չի ունեցել ներկայացնելու գիտականորեն մշակված հայ գրականության պատմություն, այլ ուղղակի թուզիկ ակնարկով ուրվագծում է հայ մատենագրության անցած ուղին՝ հետևելով իր ժամանակի ռուս գրականության ոճին:

Ն.Մառը Նազարյանցի առաջին գրքի մասին գրում է, որ այդտեղ «նկատվում է ձգտում հայ գրականության շարադրանքը դնել ոչ այնքան իր ժամանակի գիտական պահանջների մակարդակին, որքան արտահայտել ժամանակի ռուսահայ մտավոր շարժման հետ բարձրացող պահանջները»:²

Առաջաբանում Նազարյանը նշում է, որ ճիշտ է, հայոց գրականությունը չունի արաբական, պարսկական, հնդկական և չինական գրականությունների ոչ հետաքրքրությունը, ոչ էլ հարստությունը, բայց իր գանձերով, որոնք դեռևս գնահատված չեն պատմաբանների և լեզվաբանների կողմից, արժանի է ուշադրության:

Նազարյանը գտնում է, որ ինչպես մյուս ժողովուրդների գրականությունները, այնպես էլ հայ հին գրականությունը, սկսվում են հնագույն հեռուսական սխրանքները ներկայացնող երգերով, որի առանձին հատվածները մեզ են հասել Ս.Խորենացու միջոցով: Բայց քրիստոնեությունը, ասում է նա, դառնալով պետական կրոն՝ սեփական դրույթները հաստատելու համար ոչնչացրեց հեթանոսական ազգային բանավոր և գրավոր մշակույթի մի ամբողջ գանձարան. «Ժամանակը և մեր նախնիների անփութությունը ժողովրդական բանավոր երգերի, ավանդույթների հավաքման գործում զրկել են մեզ մեր ամբողջ հերոսապատումից»:³

Անդրադառնալով V դարի իրադարձություններին, Նազարյանը նշում է գրերի գյուտի պատմական նշանակությունը մեր ժողովրդի ազգային ինքնության հաստատման և հոգևոր հեղաշրջման համար: Ընդգծելով հունարենի ազդեցությունը V դարի գրական լեզվի ձևավորման վրա՝ խոսում է այն մասին, որ հայոց լեզուն իր փոխառությունների հետ կարողացել է, օտարը վերափոխելով, այն դարձնել իր սեփականությունը և զարգացնել նոր ձևեր, որոնք հարստացրին նրան. «Ընդհանուր շփման եզրեր ունենալով հելլենիզմի հետ՝ հայոց լեզուն կարողացել է մտածել և արտահայտվել իր ինքնուրույն գործունեությամբ՝ օտարը վերափոխելով այն դարձնել իր սեփականությունը և

2. С. Арешян, «Армянская печать и царская цензура», стр. 136:

3. Ստ. Նազարյան, ԵՃ, Երևան, 1996թ.:

բեղուն անդլոգիական հիմքի վրա զարգացնել նոր ձևեր, որոնք լեզվին տվել են անօրինակ հարստություն»:⁴

Նազարյանցը, բարձրացնելով մեր հին գրականության արժեքը, ներկայացնում է IV-XIII դարերի հայ գործիչներին՝ իրենց գրական հարստություններով, բայց միաժամանակ նա եղածը բավական չի համարում ժամանակակից հայ կրթության և առաջադիմության համար: Անհրաժեշտ է մի նոր գրական վերածնություն, իսկ դրա համար անհրաժեշտ է ունենալ նոր, ամենքին հասկանալի լեզու: Միայն այդ լեզվի միջոցով հայ գրականությունը կդառնա կենսունակ ու զարգացող գործոն:

Այստեղ աշխատության հեղինակը կասկածի տակ է առնում հնդեվրոպական լեզվաընտանիքում հայերենը իրանական լեզու համարելու վարկածը. «Հայերը, լինելով սահմանային երկիր և երբեմն էլ ենթակա լինելով միդոպարսիկներին, վերցրել են փոխառություններ, սակայն լեզվի կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրա մեջ կան այնպիսի առանձնահատկություններ, որոնք կարող են լիովին ժխտել նման մի ենթադրություն այդ երկու լեզուների արմատական ընդհանրության մասին»:⁵

Նազարյանցի այս կարծիքը հետագայում հիմնավորվում և հաստատվում է գերմանացի հայագետ Յուլբշմանի կողմից: Հայերենը հնդեվրոպական ընտանիքի մեջ է մտնում որպես ինքնուրույն լեզու:

Նույն աշխատության մեջ հեղինակը խոսում է նաև մինչև V դարը մեզ մոտ «ոստանիկ» լեզվի կողքին «եզերական» լեզուների գոյության մասին և դրանց առաջացումը կապում է գրաբարի «ավերման» հետ: Իսկ ժամանակակից բարբառներից նրա կարծիքով միայն արարատյան բարբառն է, որ համեմատաբար հարազատ է մնացել իր սկզբնաձևին՝ գրաբարին. «ժողովրդական բարբառներից դասական գրաբարին ավելի մոտ է կանգնած արարատյանը, և հակառակը՝ առավել փոփոխված ձևերով են ներկայանում Ագուլիսի, Վանի և Մոկքի բարբառները»:⁶ Բարբառներին առնչվող մի շարք հարցերի Նազարյանցն անդրադառնում է հետագա տարիներին կատարած իր ուսումնասիրություններում:

1846թ. Նազարյանցը իբրև մագիստրոսական դիսերտացիա ներկայացնում է իր II աշխատությունը՝ «Տեսական ակնարկ հայ գրականության պատմության նորագույն շրջանի» («Обозрение истории гайканской письменности

4. Նույն տեղում՝ էջ 9:

5. Նույն տեղում՝ էջ 9:

6. Նույն տեղում՝ էջ 10:

в новейшие времена»): Աշխատությունն ընդգրկում է XIV դարից մինչև 1840-ական թվականներն ընկած ժամանակաշրջանը:

Աշխատությունն սկսվում է հայ մատենագրությանն ուղղված մի ընդհանուր ակնարկով. Նազարյանցն ընդգծում է ազգային գրականության առաջատար դերը, քանի որ ժողովրդի սրտի ու հոգու վրա, ոչինչ այնքան խորն ազդեցություն չի գործում, որքան բանաստեղծական խոսքն ու գրականությունը, որտեղ արտացոլվում են ազգային կենցաղը, կյանքի մակընթացություններն ու տեղատվությունները. «Ազգերը, ժամանակի և տարածության մեջ, ծագում են, ծաղկում և ընկնում կամ վերջնականապես, կամ մի քանի հարյուրամյակով, մինչև մարդկության հանձարը, ավելի նպաստավոր հանգամանքների մեջ, վերածնվում է իր դարավոր դագաղից և վերանորոգված ուժերով գնում այն ճանապարհով, որ նախագծել է նախախնամությունը երկրագնդի ցեղերի համար: Ազգերի կյանքի երևույթների այս անընդհատ տեղատվությունն ու մակընթացությունը, ինչպես մի մեծ հայելու մեջ, պարզ արտահայտվում է լեզուների ու գրականությունների պատմությամբ, որոնք, ինչպես ազգային կեցության անփոփոխ հավատարիմ ուղեկիցներ, գնում են նրա հետ օրորոցից մինչև գերեզման»:⁷

XIV դարից հայ գրականությունը դեպի անկում էր գնում, չնայած որ XVII դարում «ազգի մի քանի ճգնյալներ՝ Բարսեղ Բիթլիսեցին, Հակոբ Էջմիածնեցին, Կոլոտ Կ.Պոլսեցին, ճգնում են վերականգնել կործանված գրականությունը: Ասկայն, գրականության վերածնությունը Նազարյանցը կապում է Մխիթար Սեբաստացու և Մխիթարյանների գործունեության հետ: Նրանց մասին հեղինակը խոսում է մի առանձին հիացմունքով: Նա առանձնակի հիացմունքով է խոսում Մխիթարյանների գրական, հրատարակչական գործունեության արժանիքների մասին՝ գնահատելով նրանց հայագիտական աշխատությունները: Խոր ակնածանքով է խոսվում Մխիթար Աբբայի «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» մեծածավալ աշխատության մասին, որը իր ժամանակի համար այս ասպարեզում իր նախորդը չուներ. «Մխիթարյանների Ակադեմիայի երևան գալը հայոց մտավոր կյանքի ամենանշանավոր դեպքն էր: Հայ ժողովուրդը մինչև այդ ընկղմված էր խոր տգիտության մեջ, իսկ նրա լեզուն՝ կատարյալ բարբարոսական դրության մեջ (ընդգծումն իմն է - Լ.Թ.): Մխիթարը, որ իրավացի կերպով անվանվում է հայերի նոր լուսավորիչ և Ուսերոպ, իր միաբանության հիմնադրությամբ մի անխորտակելի պատվար կանգնեցրեց գրական խանգարման

7 Լեո, Երկերի ժողովածու, 1-րդ թրգմանություն է. Տ. Назарянц "Обозрение истории гайканской письменности в новейшие времена", էջ 48:

սաստիկ հեղեղումների դեմ»⁸

Քննելով հայ իրականությունը և հայ գրականությունը՝ Նազարյանը նկատում է, որ պատմական հանգամանքների պատճառով հայ գրականությունը և լեզուն դարերով ետ են մնացել հայկական կյանքից և գրեթե առնչություն չունեն ազգային նոր կեցության հետ: Այն ժողովուրդը, որը հազիվ սկսել ազատ շնչել, այն ժողովուրդը, որի պատմական հիշողությունը և հոգևոր բարոյական մտայնությունը, բացի կրոնից և ֆիզիկական ինքնությունից, գտնվում էր ասիական բռնատիրության լծի տակ՝ խլացած ու թշվառ, այդ ժողովրդի համար իրավունք չունենք ենթադրելու հանկարծակի ծաղկման հնարավորություն:⁹

Նազարյանցն առողջ մտտեցում ուներ մեր գրականության ու ժողովրդի անցած տարբեր շրջանների նկատմամբ և գտնում էր, որ ապրելու համար նրանք պետք է առաջ գնան, այսինքն՝ մոտենան եվրոպական ազգերին՝ «ընդունելով իր մեջ եվրոպական կրթության ծաղիկները»:

Նա բարձր է գնահատում հայոց անցյալը, կաթոլիկ հայերի գիտական գործունեությունը, սակայն ազգային մշակութային ընթացքը փոխելու համար այդ անցյալը չի կարող նոր կյանք ներշնչել «ժամանակակից հայ ժողովրդի մարմնին»: Ազգությունը իր ձեռքը պետք է վերցնի նոր գրականության դեկլիսկ այդ նոր գրականությունը պետք է լինի ժամանակի կարիքներին գոհացում տվող և հանրությանը մատչելի, հետևապես նրա բովանդակությունը պետք է լինի աշխարհիկ, իսկ լեզուն՝ աշխարհաբար. «Հին ձևը, որ այլևս չի համապատասխանում նոր ծագած կեցությանը, որ խորթ լինելով ժողովրդական կյանքին և հասարակաց գործունեությանը՝ կորցրել է իր նշանակությունը, չի կարող կրթության գործիք դառնալ ներկայի զավակների համար: Այդ հին ձևը անհրաժեշտորեն պիտի վերածնվի, մի սերտ, բարեկամական դաշն պիտի կապե միշտ երիտասարդացող կյանքի հետ և ամեն կերպ պահպանի նրան»:¹⁰

XIX դարի առաջին տասնամյակների հայ լուսավորական մտքի առաջընթացի մասին խոսելիս Նազարյանը հիշատակում է Չմյուռնիայի շրջակայքում բացված կրթօջախները, որոնց մեջ առանձին տող է գրվում քաղաքի Մետրոպոլիտանի վարժարանը, որի տնօրենն էր Անդրեաս Փափազյանը, միաժամանակ նկատում, որ ուսումնարանը դեռևս թույլ է կապված կյանքի հետ: Հիշատակում է նաև հնդկահայերի կրթական օջախների, «Այունաց» ընկերության մասին, հիշում հայ բանաստեղծ, մանկավարժ Գ.Ալանդարյանին, հայ

8. Նույն տեղում, էջ 49:

9. Նույն տեղում, էջ 50:

10. Առ. Նազարյանց, Եժ, էջ 101:

ականավոր գործիչ, լուսավորիչ Մ.Թաղիադյանին: Նազարյանցն անդրադառնում է նաև հայագիտության բնագավառում եվրոպացի մի շարք հայագետների՝ գերմանացի բանասեր Ֆատեր Ֆրիդրիխի, ֆրանսիացի Բորե Եվգենիի, գերմանացի լեզվաբան Պետերման Յուլիուսի կատարած աշխատանքներին:

Չպետք է անտեսել այն հանգամանքը, որ Մխիթարյանների լեզվաշինական գործունեությունն առհասարակ նպաստում էր XIX դարի առաջին տասնամյակների հայագիտության նոր դպրոցի զարգացմանը: Նազարյանցն արժանավոր գովեստներով է խոսում Մխիթարի աշակերտների մասին. Յ.Ադոնց Գյուլերին անվանում է «փայլուն խելքի և բազմակողմանի գիտնականության տեր մարդ», իսկ «Ս.Ղազարի վարդապետների մեջ ապրած արժանավոր գործիչների շարքում հավիտենական դալար փառքով ծաղկում է Յ.Գաբրիել Ավետիքյանի անունը», որի ծավալուն «Քերականութիւն հայկազեան»/1815/ աշխատության առաջին մասը՝ «Ձևաբանութիւնը» շարադրված էր աշխարհաբարով:

Իսկ իր ժամանակակից Մխիթարյաններից հիշատակում է «Սոմալին, ավագ Ավգերյանին, կրտսեր Ավգերյանին, վերջապես՝ Ղուկաս Ինժիճյանին, որ Հայաստանի գրական ամենամեծ աստղերից մեկն է և մեծարանքով նշում, որ իրենց մեծությամբ նրանք կարող էին պատիվ բերել «ամեն մի գիտնական ընկերության եվրոպայում»:

Անդրադառնալով ռուսահայերին՝ Նազարյանցը նրանց գրականության մեջ առաջադիմական քայլեր չի տեսնում: Նա միանում է XIX դարի համառուսական այն շարժմանը, որը եռանդագին ձգտում էր մեծացնել գրականության ազդեցության ուժը հասարակական կյանքում: Սակայն դրա համար նպաստավոր նախադրյալներ չկային. «Մինչև որ ազգը չի հասել իր մտավոր չափահասության, մինչև որ նրա մեջ չեն զարթնել ինքնաճանաչություն, ինքնագիտակցություն և այն միտքը, թե նա անկողոպտելի իրավունք ունի իր սեփական լեզուն սրբագործելու, մինչև այդ ժողովրդական կրթության ղեկը պիտի վարեն եկեղեցու պաշտոնյաները»:¹¹

Նա մատնանշում է պահպանողական այն խավերին, որոնք թե հայ, թե ռուս միջավայրում անտեսում էին հայ ժողովրդի ազգային զարգացման հնարավորությունները: Ըստ Նազարյանցի՝ հայկական գիտությունը դեռևս իր վրա է կրում միջին դարերի կնիքը, այն դեռևս «եկեղեցիների սեփականությունն» է կազմում, քանի դեռ ժողովուրդը չի մասնակցում իր սեփական գրականության ստեղծման գործին: Իսկ ո՞րն է հայ ազգի կոչումը. նա պետք է ճանաչի իր անցյալը, իմանա ներկայի հետ իր անելիքները. «...ընդունելով իր մեջ եվրոպա

1. Լեո, ն. տ., էջ 50:

կան կրթության ծաղիկները՝ նորից մշակե նրանց իր կերպով և այդպիսով իր խավեր մեջ ժողովրդական կեցության պայմանները կյանքի հրավիրե»:¹²

Նազարյանցն իր ժողովրդի հոգևոր զարգացման համար ուղիներ է որոնում ռուսական հասարակական այն միջավայրում, որն արդեն ամրապնդել էր ազգային գրականության մեջ նոր ծև և բովանդակություն: Դեռևս 1803թ. Ա.Շիշկովի տպագրած «Рассуждение о старом и новом слоге российско-го языка» գիրքը դարձել էր բարոյական և քաղաքական պայքարի գեղձ՝ ընդդեմ ռուս եկեղեցական լեզվի: Այս պայքարից ծնվում էր կարամզինային գրական շարժումը, որն ավարտվում է պուշկինյան լեզվի և գրական ոճի հաղթանակով: 1830-ական թթ. ռուս ականավոր դեմոկրատ-քննադատ Բելինսկին հիմնավորում էր ազգային գրականության նոր բովանդակության հիմնական հատկանիշները, որոնք պետք է ամբողջանային Գոգոլի ստեղծագործություններում:

Իսկ այդ նույն ժամանակ հայ գրական անդամատանում Խ.Աբովյանը իր «Վերք Չայաստանի» վեպով նոր ձևով ու շնչով կենդանացնում է հեռավոր անցյալի դրական ավանդները:

Ահա այս ժամանակ է, որ Նազարյանցին ևս հաջողվում է հրապարակել ազգային-լուսավորական մի ծրագիր, որտեղ տեղ են գտել նրա խորհրդածությունները, որը հիմնված էր գրական նոր լեզվի, ազգային գրականության ստեղծման և զարգացման նոր պահանջների վրա. «Մենք կրկնում ենք, որ հին հայոց լեզուն իր խիստ գիտական և գեղարվեստական կառուցվածքով չի կարող ծառայել ժամանակակից հայերին իբրև կրթական միջոց: Եթե հայերը, որոնք հետ են մնացել իրենց հայրերի լուսավորությունից, չեն ուզում զրկվել իրենց հոգևոր ինքնությունից, ապա պետք է գրականորեն մշակեն իրենց ժողովրդական լեզուն, ընդունելով հիմք Արարատյան բարբառը, (ընդգծումն իմն է -Լ. Թ.), իբրև ավելի մաքուրը մյուսների մեջ, փոխառնելով ազնիվ տարրերը մնացածից, որոնք գոյություն ունեն Չայաստանի տարբեր մասերում»:¹³

Նա դեմ էր այն մտքին, որ պետք է նախ քերականություն կազմել: Քերականությանը լեզու չի ստեղծվում, երբ կազմակերպվի լեզուն, ապա կկազմվի և քերականությունը:

Նազարյանցը կոչ էր անում հետևել եվրոպական քաղաքակիրթ ազգերի օրինակին, որոնց մոտ մարդկային մտքի հաջողությունները լուսավորության ճառագայթներով հասնում են «մինչև երկրագործի խրճիթը», բարձրացնում

12. Ն. տ., էջ 52:

13. Լեռն. ն. տ., էջ 53:

նրա գիտակցությունը կրթության և զարգացման համար: Անհրաժեշտ է ստեղծել նոր տիպի դպրոցներ, որտեղ պետք է դասավանդել պարզ, ժողովրդական հայերենով՝ դասավանդության գործը մատչելի դարձնելու համար և անհրաժեշտ դասագրքեր մշակել գիտության զանազան ճյուղերի համար. «Ամեն մի զգացմունք, ամեն մի մտապատկեր, ամեն մի գաղափար, որ ազգային կեղևի մեջ զգվում է պատանի հայի հոգու մեջ, կարող է և պարտավոր է այնտեղ խոր արմատներ տարածել: Լեզուն և գրականությունը իսկույն ծնունդ կառնեն, երբ հայ գրագետները կսկսեն գրել կենդանի ներկայի համար, յուրաքանչյուր այն անհատի համար, որ ունենալով առողջ միտք, կարողություն ունի կարդալ և հասկանալ որևէ գիրք»:¹⁴

Նույն հիմնահարցին անդրադարձել է նույն կարծիքն է հայտնել Խ. Աբովյանը գտնելով, որ գրաբար լեզվով գրված գրքերը չէին մասնակցում երեխաների դաստիարակությանը, այդ պատճառով էլ հայ երեխաներին ավելի շատ գրավում են օտար գրականությունն ու լեզուները. «Ո՛ւզում էի շատ անգամ մազերս պոկեմ՝ որ էս օտար լեզուքը ավելի էին սիրում, քանց մերը: Բայց պատճառը շատ բնական էր. էն լեզվըներումը նրանք կարդում էին էն բաները՝ որ մարդի սիրտ կարող էին գրավել, չունքի սրտի բաներ էին՝ ո՞վ չի սիրիլ: Ո՞վ չի ուզիլ լսիլ՝ թե սերը, թարեկամությունը, հայրենասիրությունը, ծնողը, զավակը, մահը, կռիվը ինչ գատ են, բայց մեր լեզվումը թե էսպես բաներ ըլին, թող աչքս հանեն»:¹⁵

Հայերի մեջ լուսավորության և գիտության նվաճումները տարածելու համար Նազարյանցն անհրաժեշտ է համարում կազմել ընկերություններ, հրապարակել պարբերականներ, «որ տար իր էջերի մեջ հողվածներ ընդհանուր պատմությունից, աշխարհագրությունից և վիճակագրությունից (մանավանդ հայոց և ռուսաց), հետաքրքրական տեղեկություններ բնագիտությունից, նույնպես և տեղեկություններ հայերի ներկա դրության մասին զանազան պետությունների մեջ, եվրոպական ազգերի քաղաքական և եկեղեցական դրության մասին, գյուտերի մասին ... և այլն»:¹⁶

Այսպիսին էին Նազարյանցի պահանջները ներկայից: Նա առողջ մտեցում ուներ մեր գրականության ու ժողովրդի անցած տարբեր շրջանների նկատմամբ և շատ սուր էր դնում հարցը, հայ ժողովուրդը կամ պետք է ապրի, կամ պետք է կործանվի: Ապրելու համար պետք է առաջ գնա, հետևի մարդկության առաջա-

14. Նույն տեղում, էջ 53:

15. Խ. Աբովյան «Վ. Գ.», Եր. 1981, էջ 43:

16. Լեո, Եժ, էջ 53:

դիմությանը, պետք է նորոպի վերածնվի. «Ամեն ինչ, որ գոյություն ունի ժամանակի մեջ, մի տեղ գրավելու և պահպանելու համար, անհրաժեշտորեն պարտավոր է հետևել իր դարի շարժմանը, մասնակցել մարդկության հաջողություններին, անդադար վերածնվել, անդադար կատարելագործել իրան, ապա թե ոչ, իբրև հակասություն ժամանակակից ոգուն, իբրև մի բան, որ տեղ չունի կյանքի մեջ. նա մահվան պատիժ է արտասանում ինքն իր վրա և վաղ թե ուշ պիտի դառնա շատակեր ծերունի Կոռնոսի անբարբառ զոհը: (-Լ.Թ.) ... Կամ դեպի առաջ՝ դարի հետ, կամ քարացում և հոգևոր-բարոյական մահ»: ¹⁷

Լեոն շատ բարձր է գնահատել Ստ. Նազարյանցի «Գրականության պատմության» II մասը. «Այստեղ մենք չոր ու ցամաք գիտական հետազոտություն չենք գտնում, այլ հրապարակախոսի լայն, վարվում սիրտ, որ դուրս է գալիս նյութի նեղ սահմաններից, քարոզում է իբրև նոր ժամանակի մարգարե: Այստեղ Նազարյանցը մեր առաջին գրական քննադատն է (-Լ.Թ.), որին դեկավարում են հասարակական որոշ իդեալներ»: ¹⁸

Այստեղ վեր հանված հարցերի ու խնդիրների քննությանը մենք հանդիպում ենք Նազարյանցի հետագա շրջանի գործերում: Լեոն իրավացիորեն նշում է, որ այն լուկ մի հետազոտություն չէր և ոչ միայն դիսերտացիա, այլ դրոշակ, ծրագիր, հրապարակախոսություն. «... Այստեղ է ամփոփված «Հյուսիսափայլի» ոգին, այստեղ ենք տեսնում այն սաղմերը, որոնցից կազմվեցան Նազարյանցի հրատարակած հայերեն գրքերը, նրա Այբբենարանը, «Հանդես նոր հայախօսութեանը»: Վերջապես այստեղ մեր առջևն է ապագա հայ հրապարակախոսը իր վերանորոգչական-առաջադիմական գործունեության սկզբունքներով»: ¹⁹

Այսպիսով, Նազարյանցն իր առաջին գիտական աշխատություններում ներկայացնում է մի ծրագիր, որտեղ հիմնավորում է հայ նոր լեզվի և գրականության դերն ու անհրաժեշտությունը սեփական ժողովրդի հոգևոր մշակույթի զարգացման համար:

17. Նույն տեղում, էջ 55:

18. Նույն տեղում, էջ 56:

19. Նույն տեղում, էջ 56: